

Խաչատուր Աբովյան

Պարապ վախտի խաղալիք

Ֆորթն ու խոզը

Կով ու խոզ մեկ մարդ իր թավլեն արած՝
Կովին դարման էլ՝ չէ՛ր ածում առաջն:
Խոզին թեփ, գարի տալիս, չաղացնում:
Ֆորթն էս անիրավ գործքը որ տեսավ,
Մորը գանգատվեց ու մեկ օր ասավ:
«Ախըր կաթն ու եղ, մածունն էլ հետը
Հո մեզանից ա ստանում մարդը,
Էս ի՞նչպես բան ա, մեր միսն էլ ուտում,
Էլի էս խոզին ընդունում, սիրում»:—
Համբերի՛ր՝ որդի՛՝ վերջը կըտեսնիս»:
Մերն ասեց նըրան, «ու լսիր խոսքիս,
Մարդն էն բարեսիրտ կենդանուցը չի՛,
Որ նրհախ տեղը լավություն անի:
Դըրա հեսաբը մեկ օր կպահանջեն,
Թող մեզ խոտ տան ու մեզ մըտիկ չանեն»:—
Մեկ օր էլ ֆորթի ջանը դող ընկավ,
Որ լսեց դռանն՝ ինչ ճղղոց եկավ:
«Էս ի՞նչ խաբար է», մորը հարցրեց,—
«Գարո՛ւ հեսաբն է», նա պատասխանեց:
Թո՛ղ անոշ թիքին մարդ հեչ չի խափվի,
Քըթիցը կրհանեն, ինչ օր որ ըլի:—